# ՎՐԱՍՏԱՆ

«ვრასტანი» (საქართველო) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 99 - 100 (16596) ՇԱԲԱԹ, 16 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017 Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵՏՐԻ


ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ը՝ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՕՐ

## ԳԻՈՐԳԻ ԿՎԻՐԻԿԱՇՎԻԼԻ. «ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՀՆԱՐԱՎՈՐ Է ԿԱՌՈՒՑԵԼ ԱՅՆՏԵՂ, ՈՐՏԵՂ ՊԱՇՏՊԱՆՎԱԾ ԵՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ»




*Դեկտեմբերի 10-ին նշվեց Մարդու իրավունքների պաշտպանության օրը: Այս կապակցությամբ, երկրի խորհրդարանում անցկացվեց հատուկ ընդունելություն, որին ներկա էին օրենսդիր եւ գործադիր մարմինների, միջազգային եւ ոչ կառավարական կազմակերպությունների, Վրաստանում գործող կրոնական բոլոր ուղղությունների, ինչպես նաեւ Վրաստանում հավատարմագրված դիվանագիտական կորպուսի ներկայացուցիչներ:*

Իր խոսքում, Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին, անդրադառնալով մարդու իրավունքների պաշտպանության ուղղությամբ վերջին տարիներին երկրում իրականացված բարեփոխումնե-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՕՐԵՆՍԴԻՐ

## ԱՅԼ ԵՐԿՐԻ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼԸ ՉԻ ՀԱՆԳԵՑՆԻ ՎՐԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ՉԵՂԱՐԿՄԱՆ

### ՎՐԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐ

*Վրաստանի քաղաքացիության հետ կապված նոր սահմանադրությամբ նախատեսված կարգավորումները, հաջորդ տարվա նոյեմբերի փոխարեն, ուժի մեջ կմտնեն հրապարակման օրից:*

Ինչպես խորհրդարանի լիագումար նիստում, դեկտեմբերի 13-ին սահմանադրական փոփոխությունների քննարկման ժամանակ, հայտարարեց նախագահի Իրակլի Կոբախիձեն, նոր սահմանադրությամբ այլ երկրի քաղաքացիության ստացումը չի դառնա հիմք Վրաստանի քաղաքացիության չեղարկման համար:

Նրա խոսքով, փոփոխությունների համաժողովրդական քննարկման ընթացքում եղան առաջարկություններ, որ համապատասխան նորմը կիրարկվեր ավելի շուտ, քան մյուս կարգավորումները:

- Սահմանադրության անցումային դրույթում ավելացվում է համապատասխան գրանցումը, եւ հենց որ փոփոխությունները հրապարակվեն, քաղաքացիության մասին նորմը կմտնի ուժի մեջ,- հավելեց Իրակլի Կոբախիձեն:

Վրաստանի խորհրդարանի կողմից հաստատված սահմանադրության համաձայն, Վրաստանի քաղաքացիություն հնարավոր է ստանալ ծնվելու պահից կամ բնակություն հաստատելու ժամանակ: Սահմանադրությունում նշվում է, որ Վրաստանի սահմանադրության ստացումը կամ չեղարկումը որոշվում է օրգանական օրենքով:

## ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ՀԱՍՏԱՏԵՑ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԻԾԸ

*Դեկտեմբերի 13-ին Վրաստանի խորհրդարանը, երրորդ ընթերցմամբ, քննարկեց եւ 111 կողմ, 76 դեմ ձայնով հաստատեց 2018 թվականի պետական բյուջեի վերամշակված նախագիծը:*

Այն օրենսդիր մարմնի քննարկանը ներկայացրեց Վրաստանի ֆինանսների նախարար Մամուկա Բախտաձեն:

2018 թվականի պետբյուջեով կանխագծված մուտքերը սահմանվել են 12298 միլիոն լարի, այդ թվում եկամուտները՝ 10120 միլիոն, հարկային մուտքերը՝ 9470 միլիոն լարի (ՀՆԱ-ի 23,4 տոկոսը):

Նախագծում դրամաշնորհները սահմանված են 265 միլիոն լարիի չափով, այդ թվում՝ բյուջե-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

## ԳԻՈՐԳԻ ՄԱՐԳՎԵԼԱՇՎԻԼԻ. «ՄԱՆԴԱՏՈՒՐԸ ՉԻ ԿԱՐՈՂ ԴՊՐՈՑՈՒՄ ՈՍՏԻԿԱՆ ԼԻՆԵԼ»

*Դեկտեմբերի 11-ին Վրաց Ուղղափառ եկեղեցու պատրիարքարանում տեղի ունեցավ Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարքի օրհնությամբ Իրակլի Օրջամիայի կողմից աստվածաբանության հարցերով առաջին դոկտորական թեզի պաշտպանության շնորհանդեսը, որին ներկա էին Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Երկրորդը, Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին, վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին, գործադիր եւ օրենսդիր մարմինների ներկայացուցիչներ:*



Վրաստանի պատրիարքարանում անցկացված միջոցառմանը, Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին իր խոսքում անդրադարձավ վերջերս Թբիլիսիի թիվ 51 դպրոցում տեղի ունեցած ողբերգությանը եւ նշեց, որ դպրոցներում ագրեսիան հնա-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

## ԳԻՈՐԳԻ ԿՎԻՐԻԿԱՇՎԻԼԻՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՌՈՒԲԵՆ ՍԱԴՈՅԱՆԻՆ

*Դեկտեմբերի 15-ին Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին ճանաչողական բնույթի հանդիպում ունեցավ Հայաստանի նոր արտակարգ եւ լիազոր դեսպան Ռուբեն Սադոյանի հետ:*



Հանդիպմանը անդրադարձան երկու երկրների միջեւ առկա համագործակցությանը: Կողմերը ողջունեցին երկկողմ հարաբերությունների զարգացման աճող դինամիկան եւ նշեցին, որ այդ մասին են վկայում բարձր մակարդակի երկկողմ այցերը: Այս համատեքստում ընդգծվեց Հայաստանի նախագահի պաշտոնական այցը Վրաստան, որը կայանալու է դեկտեմբերի 25-26-ին եւ Վրաստանի վարչապետի պաշտոնական այցը Հայաստան, որը կայանալու է հաջորդ տարվա սկզբին:

Գիորգի Կվիրիկաշվիլին Ռուբեն Սադոյանին շնորհավորեց արտակարգ եւ լիազոր դեսպան նշանակվելու առիթով եւ նրան մաղթեց արդյունավետ գործունեություն:

## ՎՐԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԸ ՀԱՆԴԻՊԵՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՍՊԱՆԻՆ

*Դեկտեմբերի 11-ին Վրաստանի փոխվարչապետ, արտաքին գործերի նախարար Միխեիլ Ջանելիձեն հանդիպեց երկրում Հայաստանի նորանշանակ արտակարգ եւ լիազոր դեսպան Ռուբեն Սադոյանին:*

Հանդիպմանը Միխեիլ Ջանելիձեն Ռուբեն Սադոյանին շնորհավորեց Վրաստանում դեսպան նշանակվելու կապակցությամբ եւ հաջողություններ մաղթեց ապագա գործունեության մեջ: Իր հերթին, Ռուբեն Սադոյանը պատրաստակամություն հայտնեց առավելագույնս նպաստել տարբեր ոլորտներում երկու երկրների միջեւ համագործակցության խորացմանը:

Հանդիպմանը կողմերը քննարկեցին երկկողմ եւ բազմակողմ համագործակցության հրատապ հարցեր:

Միխեիլ Ջանելիձեն ընդգծեց երկու երկրների միջեւ բարձր մակարդակի այցերի փոխանակման դինամիկան եւ արտաքին քաղաքական գերատեսչությունների դերը երկու երկրների հարաբերությունների զարգացման գործում:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆՈՐԱՆՇԱՆԱԿ ԴԵՍՊԱՆԸ ՀԱՆԴԻՊԵՑ ՎԻՐԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ

*Դեկտեմբերի 14-ին, մայրաքաղաքի կենտրոնում գտնվող «Թբիլիսի Մերիոտ» հյուրանոցի կոնֆերանսների մեծ դահլիճում, Վրաստանում Հայաստանի նորանշանակ արտակարգ եւ լիազոր դեսպան Ռուբեն Սադոյանը հանդիպում ունեցավ վիրահայ համայն-*



Հանդիպմանը ներկա էին Վիրահայոց թեմի հոգեւոր դասի, Թբիլիսիում եւ տարածաշրջաններում գործող հայկական կրթամշակութային կառույցների, համայնքային կազմակերպությունների, Վրաստանի խորհրդարանի եւ Սամցխե-Ջավախեթիի ու Քվեմո Քարթլիի մունիցիպալիտետների տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներ:

Ի դեպ նշենք, որ, նորանկախ Վրաստանի եւ Հայաստանի միջեւ դիվանագիտական հարաբերությունների 25-ամյա պատմության մեջ, Ռուբեն Սադոյանը Վրաստանում Հայաստանի թվով վեցերորդ դեսպանն է եւ առաջինը, ով իր դիվանագիտական առա-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՕՐԵՆՍԴԻՐ

# ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ՀԱՍՏԱՏԵՑ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԻԾԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

տային դրամաշնորհները՝ 100 միլիոն, իսկ ներդրումային (ծախսերին կցված) դրամաշնորհները՝ 165 միլիոն, մյուս եկամուտները՝ 385 միլիոն լարիի չափով:

Միջոցները, որոնք պետք է ստացվեին չֆինանսավորվող ակտիվների նվազեցման ուղիով, կազմում են 60 միլիոն լարի, ֆինանսական ակտիվությունների նվազեցման ցուցանիշը սահմանվել է 80 միլիոն լարիի չափով, իսկ միջոցները, որոնք ստացվելու են պարտավորությունների մակարդակի բարձրացման ուղիով, կազմելու են 2038 միլիոն լարի:

Պետական բյուջեի ներդրումները սահմանվել են 12364,6 միլիոն լարիի չափով, որից բյուջետային միջոցները կազմում են 10911,6 միլիոն, դրամաշնորհները՝ 165 միլիոն, վարկերը՝ 1288 միլիոն լարի:

Չֆինանսավորվող ակտիվների աճի հոդվածում նախատեսված է 1433,2 միլիոն, իսկ ֆինանսական ակտիվության աճի հոդվածով առանձնացվել է 636,7 միլիոն լարի:

Պարտավորությունների նվազեցմամբ, տնտեսվող միջոցները կազմում են 790,1 միլիոն լարի, որից 725 միլիոնը ուղղվելու է արտաքին պետական պարտավորությունների մարմանը, իսկ 65,1 միլիոնը՝ պետական ներքին պարտավորությունների եւ պարտքերի մարմանը:

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ը՝ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՕՐ

# ԳԻՈՐԳԻ ԿՎԻՐԻԿԱՇՎԻԼԻ. «ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՀՆԱՐԱՎՈՐ Է ԿԱՌՈՒՑԵԼ ԱՅՆՏԵՂ, ՈՐՏԵՂ ՊԱՇՏՊԱՆՎԱԾ ԵՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

րի թեմային, նշեց, որ իր գլխավորած կառավարության գլխավոր ձեռքբերումը հենց այդ ուղղությամբ ապահովված առաջընթացն է, թեպետ դրանով բավարարվել չի կարելի, եւ երկրում սկսված հետեւողական բարեփոխումներն այդ ոլորտում պետք է շարունակվեն:

Պետության ղեկավարը ներկաներին շնորհավորեց Մարդու իրավունքների օրվա կապակցությամբ, ընդգծեց, որ մարդը, նրա իրավունքներն ու ազատությունները գերագույն արժեք են ներկայացնում քաղաքակիրթ աշխարհի համար: Կառավարության ղեկավարի հավաստմամբ, պետություն հնարավոր է կառուցել այնտեղ, որտեղ պաշտպանված է յուրաքանչյուր մարդու իրավունք:

Օգտվելով առիթից՝ Վրաստանի վարչապետը Նինո Լոմջարիային շնորհավորեց ժողովրդական պաշտպանի պաշտոնում ընտրվելու կապակցությամբ եւ նրան մաղթեց հաջողություններ:

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

# ԳԻՈՐԳԻ ՄԱՐԳՎԵԼԱՇՎԻԼԻ. «ՄԱՆԴԱՏՈՒՐԸ ՉԻ ԿԱՐՈՂ ԴՊՐՈՑՈՒՄ ՈՍՏԻԿԱՆ ԼԻՆԵԼ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

րավոր է հաղթահարել միայն ուսուցչի ջանքերով, եւ դրա համար պետք է բարձրացվի վերջինիս իրավունքն ու հեղինակությունը: Նախագահը վարչապետին եւ կրթության նախարարին կոչ արեց է՛լ ավելի արագացնել կրթական համակարգի բարեփոխումները:

- Ագրեսիան եւ չարությունը հնարավոր է հաղթահարել ոչ թե ագրեսիայով, այլ սիրով: Ես, որպես կրթության նախկին նախարար, կարող եմ ասել, որ հարկ է լուծել բազում հիմնախնդիրներ, թեպետ դրանց լուծման միակ ուղին ուսուցչին իրավասությունների հանձնումն ու հասարակությունում նրա հեղինակության բարձրացումն է: Ուսուցիչը այն միակ ռեսուրսն է, ով փոխում է տրամադրվածությունը դպրոցում,- հայտարարեց Վրաստանի նախագահը եւ հավելեց, որ դպրոցի մանդատուրների ծառայությունը դպրոցի ուսուցիչների օգնական ծառայություն է, եւ այն չի կարող իրականացնել իրավապահի գործառույթներ:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

# ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐՎԵՑ ENPARD ԾՐԱԳՐԻ ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼԸ



***Դեկտեմբերի 13-ին «Էքսպո Ջորջիա» ցուցադրական կենտրոնում, «Գյուղում բարեկարգ կյանքի համար» խորհրդաժողովի շրջանակներում, Եվրամիությունն ու Վրաստանի կառավարությունը հանրագումարեցին գյուղի եւ գյուղատնտեսության զարգացման (ENPARD) եվրոպական հարեւանության ծրագրի առաջին փուլը եւ հայտարարեցին Եվրամիության կողմից ծրագրի հաջորդ փուլի ֆինանսավորման համար գյուղատնտեսության ոլորտում նոր հատկացումների մասին:***

Միջոցառմանը ելույթ ունեցան Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին, Վրաստանում Եվրամիության դեսպան Յանոշ Հերմանը եւ գյուղատնտեսության նախարար Լեւան Դավիթաշվիլին:

Խորհրդաժողովում ENPARD գնահատման առաքելությունը ներկայացրեց նախագծի առաջին փուլի տարբեր բաղադրիչների արդյունքները: Խորհրդաժողովին զուգահեռ անցկացվեց ENPARD կոոպերատիվների արտադրանքի համտեսում եւ կազմակերպվեց ցուցահանդես՝ գյուղի զարգացման թեմայով: Միջոցառումները ֆինանսավորվել էին Եվրամիության կողմից:

ENPARD նախագիծը գործում է 2013 թվականից, եւ դրա ընդհանուր բյուջեն կազմում է 179,5 միլիոն լարի:



ԱՄՆ

## ՌԱԶՄԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ՝ 692 ՄԻԼԻԱՐԴ ԴՈԼԱՐ

*Հաստատվեց ԱՄՆ պաշտպանության գերատեսչության բյուջեն: Այն կազմում է 692 միլիարդ դոլար: Այդ գումարից շուրջ 4 միլիարդը ծախսվելու է ռուսական ագրեսիայից Արեւելյա եւ Կենտրոնական Եվրոպայի պաշտպանության համար, իսկ 350 միլիոնը կտրվի Ուկրաինային՝ որպես ռազմական օգնություն:*

ԻՍՐԱՅԵԼ

## ԵՐՈՒՍԱՂԵՄԸ ԻՍՐԱՅԵԼԻ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԿՈՉ

*Իսրայելի վարչապետ Բենիամին Նեթանյահուն համոզվածություն է հայտնել, որ Եվրամիության երկրների մեծամասնությունը Երուսաղեմը կճանաչի որպես Իսրայելի մայրաքաղաք եւ իրենց դեսպանությունները կտեղափոխի այնտեղ: Նշենք, որ Եվրամիության երկրների մեծ մասը պաշտպանում է Երուսաղեմի կարգավիճակի շուրջ ընդունած միջազգային կոնսենսիուսը, հանդես են գալիս դեսպանությունը Երուսաղեմ փոխադրելու ԱՄՆ որոշման դեմ: Ավելացնենք, որ Իսլամական համագործակցության կազմակերպությունը Պաղեստինը ճանաչել է պետություն՝ Արեւելյան Երուսաղեմ մայրաքաղաքով: Այդ որոշումը ընդունվել է Ստամբուլում անցկացված արտահերթ գագաթաժողովում:*

ՍԻՐԻԱ

## ՀՐԱՄԱՅՎԵԼ Է ԶՈՐՔԵՐԸ ԴՈՒՐՍ ԲԵՐԵԼ ՍԻՐԻԱՅԻՑ

*Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը դեկտեմբերի 11-ին Սիրիայում գտնվող «Հմեյմիմ» ռուսական ավիաբազայում հայտարարեց, որ հրամայել է սկսել ռուսական զորախմբի դուրսբերումը Սիրիայից:*

*Պուտինը ավիաբազայում էր գտնվում Սիրիայի նախագահ Բաշար Ասադի, ՌԴ պաշտպանության նախարար Սերգեյ Շոյգուի եւ Սիրիայում գործող ռուսական զորախմբի հրամանատար Սերգեյ Սուրովիկինի հետ միասին: Նշենք, որ դեռեւս դեկտեմբերի 6-ին ՌԴ գլխավոր շտաբը հայտարարել էր, որ Սիրիան ամբողջությամբ ազատագրված է ահաբեկիչներից, ոչնչացված են ԴԱԻՇԻ բոլոր ելուզակախմբերը:*

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆՈՐԱՆՇԱՆԱԿ ԴԵՍՊԱՆԸ ՀԱՆԴԻՊԵՑ ՎԻՐԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

քելությունն սկսեց ողջունելի միջոցառումով՝ տեղի հայ համայնքի ներկայացուցիչների հետ հանդիպմամբ:

Դիմելով հավաքվածներին՝ Ռուբեն Սադոյանը, մասնավորապես, նշեց.

- Գերաշնո'րհ Սրբազան հայր, մեծարգո' հյուրեր, վիրահայ համայնքի հարգելի' ներկայացուցիչներ,

Ինձ համար մեծ պատիվ եւ միաժամանակ լրջագույն պատասխանատվություն է լինել Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպանը բարեկամ Վրաստանում:

Ասել, թե Հայաստանն ու Վրաստանն ունեն ընդհանրություններ, նշանակում է շատ քիչ բան ասել: Մեր ժողովուրդները, մեր պատմությունն ու մշակույթը սերտորեն փոխկապակցված են միմյանց: Եվ դա ամենեւին էլ պատահական չէ, քանի որ մենք հազարավոր տարիներ ապրում ենք կողք-կողքի, իսկ ժամանակի փորձությունն անցած եւ դրանով իսկ թրծված մեր բարեկամության հենքը շաղախված է փոխադարձ խորը հարգանքով ու ամուր վստահությամբ:

Հայաստանի ու Վրաստանի միջեւ փոխհարաբերությունները շարունակում են ընդլայնվել եւ ավելի խորանալ, իսկ այդ ամենում իր մեծագույն ներդրումն ունի վիրահայ համայնքը, որն, իրավամբ, մեր երկու պետությունները միմյանց կապող կարեւորագույն օղակներից մեկն է:

Վրաստանը հայ ժողովրդի պատմության մեջ անկյունաքարային նշանակություն է ունեցել: Ներսիսյան դպրոցն ու հայ դպրության մյուս կաճառները, Սուրբ Գեւորգն ու Սուրբ Էջմիածինը, արվեստի, մշակույթի, գրականության հայ հսկաների այն աստղաբույլը, որոնք գործել են Թիֆլիսում եւ, ի վերջո, սրբության սրբոց Խոջիվանքը գալիս են ապացուցելու, թե ինչ հսկայական նշանակություն ու դեր է ունեցել Վրաստանը հայ իրականության համար:

Անչափ ուրախ եմ հայրենիքի սահմաններից դուրս այսքան հայրենակիցներ մի տանիքի տակ ժողոված տեսնելու համար: Ձեզ տեսնելով՝ ես ինձ ավելի ուժեղ ու ապահով եմ զգում, հասկանում եմ, որ այստեղ ունեմ ամուր թիկունք, իսկ իմ՝ ՀՀ դեսպանի պարագայում, դա կարեւորագույն պայման է:

Համաձայնե'ք, հիանալի է, երբ միասին ենք, հիանալի է, երբ միասնական ենք: Հավատացե'ք, միայն միասնական լինելով եւ միմյանց օգնելով կարող ենք հաջողության հասնել: Ասում եմ ամենայն պատասխանատվությամբ, իմ դիվանագիտական առաքելության ողջ ընթացքում անելու եմ հնարավորը, որ նպաստեմ վիրահայ համայնքի միասնականության ամրապնդմանը: Մեր հաջողության գրավականը դա է: Եվ ոչ միայն հաջողության, ինչպես կասեր Մեծն Չարենցը, առհասարակ, հայ ժողովրդի միակ փրկությունն է միասնականությունը:

Ընդունելության հարգելի մասնակիցներ, ցանկանում եմ շնորհակալությունս հայտնել ձեզ, որ այսօր մասնակցում եք դեսպանության կազմակերպած այս գեղեցիկ եւ հիշարժան միջոցառմանը:

Առանձնահատուկ շնորհակալություն եմ ցանկանում հայտնել նաեւ Վրաստանի բարձրագույն իշխանություններին, որոնց բարյացակամ վերաբերմունքը հայ համայնքի նկատմամբ մշտապես ակնառու է:

Իմ մեծ ցանկությունն է, որպեսզի վիրահայ համայնքն իր գործունեությամբ միայն վերելքներ գրանցի, որպեսզի այստեղ կրկին բացվեն նոր վերնատուներ ու մշակութային օջախներ, որպեսզի կարողանանք պահել մեր ազգային ինքնությունն ու ինքնագիտակցությունը: Իսկ այդ ամենին հնարավոր է հասնել միայն մեկ ճանապարհով, ինչպես արդեն նշեցի՝ միասնական լինելու ճանապարհով: Վստահ եղե'ք, այդ ճանապարհին ես ձեր կողքին եմ:

**ՌՈՒԲԵՆ ՍԱԴՈՅԱՆ.-** *Ծնվել է 1968թ., Երեւանում: Ավարտել է Երեւանի ժողովրդական տնտեսության ինստիտուտը՝ ֆինանսիստ-տնտեսագետի մասնագիտությամբ:*

*Աշխատել է Հայաստանի հարկային պետական տեսչության համակարգում: Տարբեր տարիներին գլխավորել է «Վահունի», «Ռոյալ կրիստալ» ՍՊԸ-ները: Ապա աշխատանքի է անցել Հայաստանի պետական եկամուտների նախարարության հարկային տեսչության վերլուծության եւ հարկային եկամուտների պլանավորման բաժնում՝ որպես գլխավոր հարկային տեսուչ:*

*2007-2012 եւ 2012-2017թթ. Հայաստանի Ազգային ժողովի 4-րդ եւ 5-րդ գումարումների պատգամավոր էր:*

*Հայաստանի նախագահի 2017թ. հոկտեմբերի 31-ի հրամանագրով, նշանակվել է Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան:*

*Ամուսնացած է, ունի երկու երեխա:*

# Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

## ՍԿՍՎՈՒՄ Է ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՍՏԱԺԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ

***Վրաստանի կառավարությունը սկսում է «1+4» նախագծի մասնակից ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների ստաժավորման ծրագիրը: Այդ մասին, կառավարության նիստի ավարտից հետո, հայտարարեց հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության հարցերով պետնախարար Քեթեւան Ցիխելաշվիլին:***



Նրա խոսքով, ավարտական կուրսի եւ շրջանավարտ ուսանողները, ովքեր մասնակցում են նախագծին, պետական հաստատություններում կանցնեն ստաժավորում:

- Մեր պետության հիմնական խնդիրներից եւ առաջնահերթություններից մեկը քաղաքացիական ինտեգրումն է: Հասարակությունում, որտեղ յուրաքանչյուր քաղաքացի իրավահավասար է, իրացվում են յուրաքանչյուր քաղաքացու հնարավորությունները: Պետության առաջնահերթությունն է նաեւ առանձնակի ուշադրություն հատկացնել երկրի կյանքի տարբեր ոլորտներում ազգային փոքրամասնությունների ներգրավմանը: Ծրագիրը մշակվել եւ սահմանվել է նրանց համար: Գործում է «1+4» նախագիծը, որի շրջանակներում ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները, ովքեր ավարտում են ոչ վրացական դպրոցներ, մեկ տարվա ընթացքում սովորում են վրացերենը, ապա ուսումը շարունակում են պետական լեզվով: Հենց «1+4» նախագծի շրջանավարտների կամ ավարտական կուրսի ուսանողների համար մենք հնարավորություն ենք ստեղծում ստաժավորումն անցնել պետական հաստատություններում,- ընդգծեց Քեթեւան Ցիխելաշվիլին:

Նրա խոսքով, նախագիծն արդեն իրականացվել էր տարվա սկզբին եւ 65 երիտասարդ ստաժավորում անցավ պետական քսան հաստատությունում, արդյունքը գոհացուցիչ էր:

- Այսօր որոշեցինք այդ ամենին հաղորդել իրավաբանական ձեւաչափ, ստանձնել պարտավորություն, եւ դա կարեւորագույն քայլ կլինի քաղաքացիական ինտեգրման գործում,- ընդգծեց նա:



### ԻՆՉՊԵՍ ՈՒՆԵՆԱԼ ՆՈՐ ՎԱՐՈՐԴԱԿԱՆ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐ

*Վրաստանում մինչեւ 2006 թվականի ապրիլի 1-ը տրված վարորդական վկայականները նորացվելու են: Այդ վկայականների իրավական ուժի ժամկետը լրանում է 2018 թվականի հունվարի 1-ին: Նոր վկայականի ստացման համար, քննության հանձնումը պարտադիր չէ, թեպետ փաստաթղթի նորացման համար անհրաժեշտ է մուծել 15 լարի եւ ներկայացնել փաստաթուղթ՝ առողջական վիճակի մասին: Վերոնշյալ գումարի վճարումը պարտադիր է ինչպես մեխանիկական, այնպես էլ՝ ավտոմատ կառավարման շարժիչ ունեցող մեքենաների վարորդների համար:*

*Ինչ վերաբերում է 2006 թվականի ապրիլից մինչեւ 2014 թվականի մարտի 1-ը տրված վարորդական վկայականներին, ապա Վրաստանի ներքին գործերի նախարարության սպասարկման գործակալության տեղեկատվությամբ, դրանք պետք է նորացվեն մինչեւ 2028 թվականի սեպտեմբերի 1-ը:*

*Իսկ 2014 թվականի ապրիլի 1-ից տրված վարորդական վկայականներում դրանց կիրարկման կոնկրետ ժամկետը նշված է փաստաթղթում:*

*Նոր տրամադրվող վարորդական իրավունքները տրվում են 15 տարի ժամկետով, որից հետո նորից պետք է փոխել:*

*Վրաստանի ներքին գործերի նախարարության սպասարկման գործակալությունն անցնում է աշխատանքի արտակարգ ռեժիմի, որպեսզի հասցնի բոլոր ցանկացողներին նոր վարորդական իրավունքներ տրամադրել:*

*Վրաստանի օրենսդրության համաձայն, առանց վարորդական իրավունքի վարելը պատժվում է 500 լարի տուգանքով:*

ԱՎԱՆԴՈՒՅԹ

## ԹԲԻԼԻՍԻԻ ՍԻՆԱԳՈԳՈՒՄ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ՝ ՆՎԻՐՎԱԾ ԽԱՆՈՒԿԱՅԻ ՏՈՆԻՆ



Թբիլիսիի գլխավոր Սինագոգում մեկնարկեցին միջոցառումներ՝ նվիրված Խանուկայի տոնին:

Միջոցառմանը ներկա էին Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին, երկրի գործադիր եւ օրենսդիր մարմինների ներկայացուցիչներ, Վրաստանում հավատարմագրված դիվանագետներ, այդ թվում՝ Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Ռուբեն Սադոյանը:

Տոնին ուղեկցվող մոմավառության ծիսակարգում խորհրդանշական առաջին մոմը վառեց Վրաստանի վարչապետը:

Խանուկա տոնը սահմանվել է մ.թ.ա. երկրորդ դարում, ի հիշատակ Տաճարի մաքրման, զոհասեղանի օծման եւ Տաճարում եկեղեցական սպասարկումների վերականգնման, որը հետեւեց Տաճարի սարից հունա-սիրիական զորքերի եւ նրանց հրեական դաշնակիցների վտարմանը մ.թ.ա. 165 թվականին:



Ըստ ավանդույթի, Տաճարի լեռ բարձրացած հրեաները Տաճարում գտել են լամպի յուղ, որը բավական էր մեկ օրվա ընթացքում լամպի լույսի պահպանման համար: Սակայն, որպես հրաշք, կրակը չի հանգել ութ օրերի ընթացքում: Ի նշան այդ հրաշքի, տոնի բոլոր ութ օրերի ընթացքում Սինագոգում եւ հրեական ընտանիքներում մոմ են վառում:

***Լուսանկարները՝***
***ԳԻԱ ԳՈԳԱՏԻՇՎԻԼԻ***

ՇԵՄՈՍԱՎԼԵԲԻՍ ՍԱՄՍԱԽՈՒՐԻ

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

## ԲԱՑԱՀԱՅՏՎԵԼ Է ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԽԱԽՏՄԱՆ 809 ՓԱՍՏ

***Դեկտեմբերի 4-10-ը Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության հարկային մոնիթորինգի դեպարտամենտի կողմից երկրի մասշտաբով իրականացված վերահսկիչ միջոցառումների արդյունքում, բացահայտվել է հարկային օրենսդրության խախտման 809 փաստ:***

Մասնավորապես, ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության հարկային մոնիթորինգի դեպարտամենտի աշխատակիցների կողմից ստուգման է ենթարկվել 3765 հարկատու, ստուգման արդյունքում վավերացվել են հետեւյալ օրինախախտումները. առանց ապրանքագրերի ապրանքի փոխադրման 1223 դեպք, տնտեսական գործունեության հարկատուի կողմից՝ Վրաստանի օրենսդրությամբ սահմանված կարգի խախտման 45 փաստ, առձեռն առեւտրի ընթացքում գանձարկղային սարքի չօգտագործման 641 դեպք:

## ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ ԵՆ ՉՀՌՉԱԿԱԳՐՎԱԾ ՈՍԿԵ ԶԱՐԴԵՐ

Դեկտեմբերի 8-ին «Սադախլո» ավտոմոբիլային սահմանային անցակետում, Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության մաքսային աշխատակիցները, կասկածի հիման վրա, անձնական խուզարկության են ենթարկել Հայաստանի քաղաքացիներ Ն.Գ.-ին եւ Գ.Հ.-ին: Խուզարկության արդյունքում, հայտնաբերվել են չհռչակագրված ոսկե զարդեր. ընդհանուր՝ 279,01 գրամ քաշով: Ապրանքի ընդհանուր մաքսային արժեքը կազմում է 21514,83 լարի:

Վրաստանի հարկային օրենսգրքի 289 հոդվածի 10-րդ մասի համաձայն, իրավախախտում թույլ տված քաղաքացիները՝ որպես պատժամիջոց, տուգանվել են չհռչակագրված ապրանքի արժեքի չափով:

## ԱՆՑԿԱՑՎԵՑ ԱՐՅԱՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՀԱՆՁՆՄԱՆ ԱԿՑԻԱ



Դեկտեմբերի 11-ին Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության աուդիտի դեպարտամենտի աշխատակիցները, «Հանձնի'ր արյուն, փրկիր կյանք» նախագծի շրջանակներում, անհատույց արյուն հանձնեցին Թբիլիսիի Մ.Իաշվիլու անվան կենտրոնական մանկական հիվանդանոցի լեյկոզով եւ այլ ծանր պաթոլոգիական հիվանդություններով տառապող երեխաների կյանքի փրկության համար: Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայությունը պարբերաբար մասնակցում է արյան անհատույց հանձնման ակցիային:

## ԲԱՑԱՀԱՅՏՎԱԾ Է ԾԽԱԽՈՏԻ 10 ՀԱԶԱՐ ԳԼԱՆԱԿԻ ՓՈԽԱԴՐՄԱՆ ՓԱՍՏ



Դեկտեմբերի 12-13-ին Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության հարկային մոնիթորինգի դեպարտամենտի Սամեգրելո-Գուրիայի եւ Զեմո Սվանեթիի բաժնի աշխատակիցները, Զուգդիդի քաղաքում անցկացրած ընթացիկ վերահսկիչ միջոցառումների արդյունքում, բացահայտել են աքցիզային դրոշմի ծխախոտի շուրջ 10 հազար գլանակի փոխադրման փաստ:

Վրաստանի հարկային օրենսգրքի 192 հոդվածի 5-րդ բաժնի համաձայն, իրավախախտում թույլ տված քաղաքացուց ապրանքը բռնագրավվել է: Գործի նյութերը, Վրաստանի վարչական օրենսգրքի 241 հոդվածի համաձայն, արձագանքման համար փոխանցվել են համապատասխան մարմիններին:

***ՎՐԱՍՏԱՆԻ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ***

ՀՈՒՇ ԵՐԵԿՈ

# ԻՆՔՆԱԶՈՀ ՍԻՐՈՎ ԼԵՑՈՒՆ ԱՆԱՀԻՏ ԲՈՍՏԱՆՋՅԱՆԸ

***Անահիտ Բոստանջյանի բանաստեղծական ժողովածուներից մեկը կոչվում է «Հենց այսպես» (2014թ.): Անսովոր ու քմահաճ վերնագրով գիրքն ասես մարտահրավեր է աշխարհին, ում բանաստեղծուհին անքող պարզում է իր ինքնանկարը՝ ստեղծագործողի իր հակասական ու մաքառող էությունը:***

Թբիլիսիի «Թումանյանի տուն» գիտա-մշակութային կենտրոնի (ղեկավար՝ Գիսանե Հովսեփյան) նախաձեռնած՝ «Կարդում ենք Անահիտ Բոստանջյան» երեկոն, իր անմիջական մթնոլորտով, միտված էր երջանկահիշատակ բանաստեղծուհուն հիշել ու ներկայացնել «Հենց այսպես»-ի էջերում կերտած այդ ինքնանկարով: Միջոցառմանը ներկա նրա գրչակիցները, վիրահայ ու վրացի մտավորականները, ծանոթ ու անծանոթ ընթերցողները, հարազատները հուշ-պատառիկներով վեր հանեցին հախուռն, պոռթկուն, ինքնազոհ սիրով լեցուն Անահիտ Բոստանջյանի մարդկային ու ստեղծագործական կերպարը...



Բանաստեղծին, թարգմանչին, լրագրողին, Վրաստանի ու Հայաստանի գրողների միությունների անդամին, Վրաստանի գրողների միության հայկական մասնաճյուղի նախագահին, «Կամուրջ» տարեգրքի խմբագրին ու հրատարակչին՝ նույն ինքը Անահիտ Բոստանջյանին, ոգեկոչող երեկոն անցավ նրա անցած վառ ճանապարհի վկայաբանություններով, ժամանակակիցների հուշերով, վերլուծությամբ ու գնահատմամբ: Առանձնակի ընդգծվեց բանաստեղծուհու թարգմանական եւ գրական կյանքի ակտիվ գործունեությամբ իրագործած ներդրումը հայ-վրացական մշակութային կապերի ամրապնդման ճանապարհին:

Երեկոյին մասնակից բանաստեղծ-թարգմանիչ Գիվի Շահնազարը, մանրանկարիչ Մերուժան Շահումյանը, Հայաստանի հայ պրոդյուսերական կենտրոնի ղեկավար Մարինե Աբելյանը, բանաստեղծներ Լեւան Ցալուղելաշվիլին, Միխայիլ Անանովը, Լուսինե Վանոյանը, Վրաստանի կրթության ու գիտության նախարարության ազգային ուսումնական ծրագրերի փորձագետ Կարինե Մանուկյանը, տիկնիկագործ Արմեն Հովհաննիսյանը, վաստակաշատ մանկավարժ Ռոզա Զոհրաբյանը, Մառնեուլիի շրջանի Խոժոռնի գյուղի դպրոցի մանկավարժ Մանուկ Մանուկյանը, սիրիահայ ուսանող Արմենակ Թոքմանջյանը, «Հայարտուն» կրթամշակութային կենտրոնի տնօրեն Լեւոն Չիդիլյանը, նույն կենտրոնի մամլո եւ լրատվության բաժնի տնօրեն Սուսաննա Խաչատրյանն ու կրթության բաժնի տնօրեն Եվգինե Մարկոսյանն իրենց սրտաբուխ խոսքը համեմեցին Անահիտ Բոստանջյանի թեւավոր ասույթների եւ աֆորիզմների ընթերցմամբ:

Երեկոյի կազմակերպչներին ու ներկաներին իրենց ընտանիքների անունից շնորհակալանքի խոսքեր ասացին բանաստեղծուհու դուստրերը՝ մանկավարժ եւ լրագրող Մարինե եւ Գայանե Բոստանջյանները:

***ՋՈՒԼԻԵՏԱ ԲԱԴԱԼՅԱՆ***

ԳՐԱԿԱՆ ԿԱՊԵՐ

# ԳՈՂՏՐԻԿ ԵՐԵԿՈ

***Վրաստանի գրողների տանը, դեկտեմբերի 4-ին, հավաքվել էին Թբիլիսիի գրական աշխարհի ներկայացուցիչներ, գրողներ, գիր ու գրչության սիրահարներ: Նրանք հրավիրվել էին պոեզիայի երեկոյի, որի վարողը, ասմունքողը, պատմողն ու քննարկողը միեւնույն անձնավորությունն էր:***



Այդ մարդը բոլորիս քաջածանոթ ու սիրելի, Թբիլիսիի պատվավոր քաղաքացի, հասարակական գործիչ, վիրահայ անվանի բանաստեղծ-թարգմանիչ, գրական բազում բարձր պարգեւների ասպետ Գիվի Շահնազարն էր:

Մոտ երկու ժամ տեւող երեկոյի ընթացքում, պատկառազդու բանաստեղծը վրաց-հայկական լսարանին ներկայացրեց հայ քնարերգության սերուցքը: Եվ դա արվեց ինքնատիպ: Գիվի Շահնազարն անձամբ ընթերցեց հայերենից վրացերեն իր թարգմանած հայ պոեզիայի հսկաներին: Միջնադարից մինչեւ 20-րդ դարն ընդգրկող ժամանակաշրջանի հայ քնարերգության գոհարակերտ շարքը՝ Գրիգոր Նարեկացի, Նահապետ Քուչակ, Սայաթ-Նովա, Ավետիք Իսահակյան, Եղիշե Չարենց, Պարույր Սեւակ... Նա ունկնդրին ներկայացրեց թարգմանչի իր ստեղծագործական հետաքրքիր վերապրումներով ու մեկնաբանություններով:

Երեկոյի ավարտին, այդ անսովոր ու գողտրիկ երեկոյի համար, բանաստեղծին շնորհակալության ու գնահատանքի ջերմ խոսք ասաց Թբիլիսիի հրեական համայնքի ղեկավար Ջամլետ Քուխաշվիլին:

***ՋՈՒԼԻԵՏԱ ԲԱԴԱԼՅԱՆ***

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԵՐ

# ԹԲԻԼԻՍԻՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԵՑԻՆ ՀԱՅ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՐ

***Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսիում, դեկտեմբերի 10-11-ը անցկացվեցին հայ ժամանակակից երաժշտության օրեր:***

Նախագիծը կայանում է հայ-վրացական մշակութային համագործակցության շրջանակներում՝ Հայաստանի կոմպոզիտորների միության նախաձեռնությամբ եւ Վրաստանի կոմպոզիտորների միության գործընկերությամբ: Ծրագրի նպատակն է հայ ժամանակակից երաժշտության հանրահռչակումն ու տարածումը, ինչպես նաեւ երկու երկրների միջեւ մշակութային կապերի ամրապնդումն ու զարգացումը:

Համերգները կայացան Թբիլիսիի Արամ Խաչատրյանի անվան թիվ 10 արվեստի դպրոցի դահլիճում եւ Վրաստանի կոմպոզիտորների միության տանը:

Հայ ժամանակակից երաժշտության օրերի շրջանակներում, հնչեցին կոմպոզիտորներ Արամ Սաթյանի, Ռոբերտ Աթայանի, Գագիկ Հովունցի, Լեւոն Չաուշյանի, Վահրամ Բաբայանի, Վաչե Շառաֆյանի, Ջենի Ասատրյանի, Գրիգոր Առաքելյանի, Աշոտ Ղազարյանի, Նարինե Զարիֆյանի, Հովհաննես Մանուկյանի եւ Էդմոնդ Մակարյանի կամերային ստեղծագործությունները:

Նախագծի աջակիցը Հայաստանի մշակույթի նախարարությունն է:

2015 թ. Երեւանում, Գյումրիում եւ Վանաձորում կայացել է վրաց ժամանակակից հեղինակների ստեղծագործությունների 3 համերգ:

***ԱՐՏԵՄ ԳՐԻԳՈՐԵՆՑ***

ՀՈԲԵԼՅԱՆ

# ԽԱՉԱՏՈՒՐ ՎԱՐԴԱՆՅԱՆԸ. «ԵՍ ԵՎ ԻՄ ԱՐԽԻՎԸ»

***Վրաստանի խորհրդարանի Ազգային գրադարանի ցուցասրահում, «Ես եւ իմ արխիվը» խորագրով, անցկացվեց լուսանկարների ցուցահանդես՝ նվիրված ճանաչված լրագրող եւ Վրաստանի տարեցների «Սավանե» ասոցիացիայի ղեկավար Խաչատուր Վարդանյանցի ծննդյան 80 ամյակին:***

Ցուցահանդեսի բացմանը հոբելյարին շնորհավորելու էին եկել նրա գործընկեր լրագրողները, Վրաստանի ստեղծագործական մտավորականության ներկայացուցիչներ: Հանդիսությանը Վրաստանի գրողների միության նախագահ Ռեւազ Միշվելաձեն, վրացհայկական մշակութային երկխոսության գործում ներդրած ավանդի համար, Խաչատուր Վարդանյանցին հանձնեց «Վրաց մշակույթի դեսպանորդի» դիպլոմ: Վրաստանի ժուռնալիստների ստեղծագործական միության նախագահ Մարինե Գիգինեիշվիլին հոբելյարին փոխանցեց Վրաստանի վաստակավոր ժուռնալիստի դիպլոմ, իսկ «Կատարզիս» կազմակերպության հիմնադիր Ջաուր-Օլեգ Ալալիշվիլին Խաչատուր Վարդանյանցին հանձնեց պատվոգիր: Հանդիսությանը ելույթ ունեցողներն առանձնակի խոսեցին հայրենական լրագրության մեջ հոբելյարի ավանդի, նրա բարեգործական գործունեության մասին: Հատկանշական է, որ հանդիսության հրավիրատոմսի վրա տպագրվել էր «Սավանե» ասոցիացիայի 102-ամյա անդամ Թամարի բանաստեղծությունը՝ նվիրված Խաչատուր Վարդանյանցին:

Ցուցահանդեսի ավելի քան երկու հարյուր սեւ-սպիտակ եւ գունավոր, տարբեր տարիներին արված լուսանկարները կազմում են մի հարուստ արխիվ, որ շատերը կերազեին ունենալ:

Ցուցահանդեսին առանձնակի բաժին էր հատկացված Ֆրունզիկ Մկրտչյանի լուսանկարներին: Այդտեղ ներկայացված էին Ֆրունզիկ Մկրտչյանի եւ Խաչատուր Վարդանյանցի համատեղ լուսանկարները. նրանք բարեկամական սերտ կապեր ունեին: Ավելին, լրագրողը Թբիլիսիում կազմակերպեց Ֆրունզիկ Մկրտչյանի ծննդյան 85 ամյակին նվիրված միջոցառումը: Նա ներկա գտնվեց դերասանի հոբելյանին նաեւ Երեւանում: Ճիշտ է, Բուբա (Վախթանգ) Կիկաբիձեն չկարողացավ մեկնել Հայաստան, ուստի Վարդանյանցը մինչեւ մեկնելը եղավ Բուբայի տանը եւ գրանցեց նրա ողջույնի խոսքը, որն այնուհետեւ բարձրաձայնվեց Երեւանում, Ֆրունզիկ Մկրտչյանի հոբելյանական երեկոյին:

Ցուցավահանակներից մեկում ներկայացված է Կոտե Մախարաձեի սեւ-սպիտակ լուսանկարը: Վերջինս լուսանկարվել էր Հայաստանի թատերական գործիչների նախագահ Հրաչյա Ղափլանյանի եւ Ֆրունզիկ Մկրտչյանի հետ: Նշենք, որ այդ լուսանկարը ներկայացվել էր նաեւ Կոտե Մախարաձեի ինքնակենսագրական՝ «Երկու տիրոջ ծառա» գրքում: Մի քանի ցուցավահանակներում «Խաչատուր Վարդանյանցի բարեկամները» խորագրով ներկայացված էին խորհրդային կինեմատոգրաֆիայի եւ ստեղծագործական մտավորականության ներկայացուցիչների լուսանկարները: Այդտեղ կարելի էր տեսնել Մերաբ Բերձենիշվիլու, Սոփիկո Ճիաուրելու, Իոսեբ Նոնեշվիլու, Եվգենի Լեոնովի, Եվգենի Մարգունովի, Մեդեա Չախավայի, Նանի Բրեգվաձեի, Վաժա Ազարաշվիլու, Մեդեա Ջափարիձեի, Ռեզո Թաբուկաշվիլու եւ ուրիշների լուսանկարները: Ցուցահանդեսին ներկայացված էր եւս մի բացառիկ լուսանկար, որտեղ վավերացվել էր Յուրի Գագարինի եւ հանրահայտ հաղորդավար Յուրի Լեւիտանի հանդիպումը:

Լուսանկարչի՝ իր երկարամյա տարիների գործունեության ընթացքում, Խաչատուր Վարդանյանցին բախտ վիճակվեց գտնվել այնպիսի «փակ» գոտիներում, որտեղ խորհրդային իշխանության տարիներին կցանկանար հայտնվել երկրի ցանկացած քաղաքացի:



Առանձին ցուցավահանակներում ներկայացված էին Բայկալամուրյան մայրուղու Նիա Գրուզինսկայա կայարանում Խ.Վարդանյանցի նկարահանած լուսանկարները:

Խաչատուր Վարդանյանցը նշեց, որ իր մոտ կուտակվել է այնքան լուսանկարներ, որ ինքը կարող է երեք-չորս տարվա ընթացքում ցանկացած օր կազմակերպել նորանոր ցուցահանդեսներ:

- Հեռուստատեսությունում եւ տարբեր հրատարակչություններում տասնյակ տարիների աշխատանքի ընթացքում ես միշտ զբաղվել եմ լուսանկարչությամբ: Իմ ֆոտոարխիվը՝ որպես նվեր, հանձնել եմ Ազգային գրադարանին, իսկ կինոարխիվը մինչ օրս գտնվում է Թբիլիսիի Պ.Ադամյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոնում: Հիմա այնտեղ վերանորոգման աշխատանքներ են տարվում, եւ պետք է միջոցներ ձեռնարկել արխիվի փրկության համար: Լավ կլիներ, եթե օգնեին պահպանել այդ բացառիկ արխիվը,- հայտարարեց Խաչատուր Վարդանյանցը:

***ՔԵԹԵՎԱՆ ՄՂԵԲՐԻՇՎԻԼԻ***